ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/195

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 24.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20437-2019 գրությամբ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 04.12.2019թ. թիվ Ե/40/3063-19 գրության հիման վրա, 09.12.2019թ. թիվ 26/26-1/20437-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերություններին (հետայսու

նաև՝ ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանի 4.3 կետի համաձայն՝ ՍՑ-ԼՕ-2019/241 ընթացակարգի քննությունը սկսվել է սկզբից:

2. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.12.2019թ. գրությամբ հայտնել են հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները Հավելված 2.1-ով մասնակիցները ներկայացրել են տվյալներ իրական շահառուների մասին և հայտնել ու հավաստել, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկատվություն:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների Հավելված 2.1-ով ներկայացված հայտարարությունները, որով կազմակերպությունները հավաստում են, որ բացակայում է իրենց փոխկապակցված անձանց սույն ընթացակարգին միաժամանակյա մասնակցությունը, չեն համապատասխանում իրականությանը, քանի որ «Քիմպաշտպանություն Օտմիսկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ում իրական շահառուների ցանկում ներկայացված է «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի իրական շահառու Արամ

Սերյոժայի Քեշիշյանի հայր Սերյոժա Գուրգենի Քեշիշյանը: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով “Գնումների մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119 և 120 կետերի պահանջները՝ «Քիմպաշտպանություն Օտմիսկ» ՍՊԸ-ն և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի հայտերը գնահատեց անբավարար և մերժեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից հանձնաժողովի 20.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժվել են հետևյալ հիմնավորմամբ. ««Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների Հավելված 2.1-ով ներկայացված հայտարարությունները, որով կազմակերպությունները հավաստում են, որ բացակայում է իրենց փոխկապակցված անձանց սույն ընթացակարգին միաժամանակյա մասնակցությունը, չեն համապատասխանում իրականությանը, քանի որ «Քիմպաշտպանություն Օտմիսկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ում իրական շահառուների ցանկում ներկայացված է «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի իրական շահառու Արամ Սերյոժայի Քեշիշյանի հայր Սերյոժա Գուրգենի Քեշիշյանը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119 և 120 կետերի պահանջները՝ «Քիմպաշտպանություն Օտմիսկ» ՍՊԸ-ն և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի հայտերը գնահատեց անբավարար և մերժեց»: Այստեղ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակիցների համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

- Նախ, ընկերությունները Հավելված 2.1-ով ներկայացրել են տվյալներ իրական շահառուների մասին և հայտնել ու հավաստել, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկատվություն: Սակայն անհասկանալիորեն գնահատող հանձնաժողովը համապատասխան որոշմամբ արձանագրել է, որ Հավելված 2.1-ով ներկայացված հայտարարությունները, որով ընկերությունները հավաստում են, որ բացակայում է իրենց փոխկապակցված անձանց սույն ընթացակարգին միաժամանակյա մասնակցությունը, չեն համապատասխանում իրականությանը: Մինչդեռ ակնհայտ է, որ նշված Հավելված 2.1-ը նման հայտարարություններ չեն պարունակում, իսկ նույն Հավելված 2.1-ով արված հայտարությունը առ այն, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է, համապատասխանում է իրականությանը: Ելնելով

վերոգրյալից՝ ընկերությունները գտնում են, որ գնահատող հանձնաժողովը ընկերությունների հայտերը մերժելու հիմքում չէր կարող դնել այն փաստը, որ Հավելված 2.1-ով արված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ հենց Հավելված 2.1. արված հայտարարությունը համապատասխանում է իրականությանը:

- Գնահատող հանձնաժողովի կողմից չեն ուսումնասիրվել նաև այն փաստերը, թե արդյոք առկա են եղել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119-րդ կետով նախատեսված հիմքերը /կոնկրետ որ հիմքը/, այսինքն արդյոք Կարգի 119-րդ կետի իմաստով առկա է եղել երկու իրավաբանական ածանց միջև փոխկապակցվածություն: Մասնավորապես, նշված ֆիզիկական անձինք արդյոք հանդիսացել են 10 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող անձինք, թե՝ ոչ, նման ապացույց չի պահանջվել և կցված չէ արձանագրությանը /կարելի էր պարզել պետական ռեգիստրի վկայականը ուսումնասիրելիս/:

-Գնահատող հանձնաժողովի կողմից չի ներկայացվել նաև ապացույց առ այն, որ Սերյոժա Գուրգենի Քեշիշյանը իրականում հանդիսանում է Արամ Սերյոժայի Քեշիշյանը հայրը:

ՍՑ-ՆԳ-2019/195 ընթացակարգը նախաձեռնվել է 09.12.2019թ.՝ հիմքում դնելով «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված՝ “Քիմպաշտպանություն Օտմիսկ” ՍՊԸ-ի և “Անտիկոր ՕՍԿ” ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը անբավարար գնահատելը և մերժելը:

Այսինքն անհասկանալի պայմաններում «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների հայտը մերժելուց միայն 7 ամիս անց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերությունների տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով

նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դաւրարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Հատկանշական է նաև այն փաստը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգ /ՍՑ-ԼՕ-2019/233/, որի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը: Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանա-կությունը: ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն

գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավո-րապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը): Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառա¬վարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին: Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ելնելով վերը նշված փաստերի և փաստական հանգամանքներից՝ գտնում են, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակիցների համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Դեռ ավելին՝ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունները խնդրել են «Քիմպաշտպանություն Օտմիսկ» ՍՊԸ-ին և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջիններին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/195 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել են իրենց ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.12.2019թ. թիվ Ե/40/3063-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն սույն թվականի 08.05.2019թ. հրապարակել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով Պատվիրատուի կարիքների համար ձեռք էին բերվելու ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին ավազաշիթային մաքրման և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման ծառայություններ: Ընթացակարգին

մասնակցության հայտ են ներկայացրել «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները, որոնք իրենց կողմից ներկայացված հայտարարությամբ հայտնել և հավաստել են, որ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու շրջանակում թույլ չեն տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն, միաժամանակ հայտել և հավաստել են, որ բացակայում է իրենց փոխկապակցված անձանց և (կամ) իրենց կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրենց պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք (հավելված 2): Նշված հայտարարությանը կից մասնակիցները ներկայացրել են հայտը ներկայացնելու դրությամբ ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի քան քսան տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) (Հավելված 2): Ըստ ներկայացված տվյալների «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի իրական շահառու է հանդիսանում Արամ Սերյոժայի Քեշիշյանը, իսկ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալներով իրական շահառու են հանդիսանում թվով 11 անձ, որոնց ցանկում նաև «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի իրական շահառու հանդիսացող Արամ Սերյոժայի Քեշիշյանի հայր Սերյոժա Գուրգենի Քեշիշյանը:

Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման նիստում մերժել է «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը՝ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119 և 120 կետերի պահանջներով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընկերությունների կողմից հայտի թիվ 2.1 հավելվածով ներկայացրած հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը:

Նույն արձանագրության համաձայն՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժվել են:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20437-2019 գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 04.12.2019թ. թիվ Ե/40/3063-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Այսպիսով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել է 08.05.2019թ.:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **16.05.2019թ.** նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընկերությունների կողմից հայտի թիվ 2.1 հավելվածով ներկայացրած հայտարարությունները փոխկապակցած անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության վերաբերյալ, չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ում՝ իրական շահառուների ցանկում, ներկայացված է «Անտիկոր ՕՍԿ» ՍՊԸ-ի իրական շահառու Արամ Սերյոժայի Քեշիշյանի հայր Սերյոժա Գուրգենի Քեշիշյանը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժվել են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը սահմանում է, որ **<u>Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան</u>**

<u>հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին,</u> որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև նույն ընթացակարգի վերաբերյալ www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվությունը, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից էականորեն խախտվել է ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը: Մասնավորապես՝ Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ մասնակցի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացվում են լիազորված մարմին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ նշված հիմքերն ի հայտ են եկել դեռևս **<u>16.05.2019թ.,</u>** երբ գնահատող հանձնաժողովը համապատասխան հիմնավորմամբ մերժել է «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերությունների հայտերը, մինչդեռ Պատվիրատուն ընկերությունների վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է միայն **<u>04.12.2019թ.՝ մոտ 7 ամիս անց:</u>**

Նման պայմաններում, ելնելով Կարգի 45-րդ կետի պահանջից, ինչպես նաև հաշվի առնելով գնումների գործընթացի մասնակիցների՝ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների և օրինական շահերի պահպանման անհրաժեշտությունը, մասնակիցների՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ներկայացնելու և դրանք ուսումնասիրելու համար օրենսդրորեն սահմանված սեղմ ժամկետների ինքնանպատակ չլինելը, գտնում եմ, որ առկա չեն «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20437-2019 գրությամբ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» և «Անտիկոր ՕՍԿ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**